Հավելված 1

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի
2020 թվականի օգոստոսի 31-ի թիվ ___–Լ որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հինադրամի (այուսհետ՝ Ինստիտուտ) 2020/2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացը կազմակերպվում է 3 հերթով՝ հիբրիդային եղանակով:
2. Դասերի տևողությունը 60 րոպե է:
3. 1-ին հերթի դասերը սկսվում են 9:30-ին: Ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը պետք է Ինստիտուտ ներկայանան առավոտյան ժամը 8:30-ից 9:15-ը:
4. 2-րդ հերթի դասերը սկսվում են 14:30-ին: Ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը պետք է Ինստիտուտ ներկայանան ժամը 13:30-ից 14:15-ը:
5. 3-րդ հերթի դասերը սկսվում են 18:30-ին: Ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը պետք է Ինստիտուտ ներկայանան ժամը 17:30-ից 18:15-ը:
6. Առկա բակալավրիատի մարզչամանակավարժական, առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետների 1-ին կուրսի դասերը սկսվում են սեպտեմբերի 1-ից ժամը 9:30:
7. Առկա բակալավրիատի մարզչամանակավարժական ֆակուլտետի 2-րդ, 3–րդ, 4–րդ կուրսերի դասերը սկսվում են սեպտեմբերի 15–ից, ժամը 13:30:
8. Առկա բակալավրիատի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի 2-րդ, 3–րդ, 4–րդ կուրսերի դասերը սկսվում են սեպտեմբերի 15–ից, ժամը 12:10:
9. Առկա մագիստրատուրայի կինեզոլոգիայի, մարզական լրագրության, սպորտի հոգեբանության, ՖԴՏ և տեխնոլոգիաների, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և սպորտ և մարզիկների պատրաստության համակարգի ուղղություններով դասերը սկսվում են սեպտեմբերի 15-ից, ժամը 14:30:

10. Առկա մագիստրատուրայի կառավարման և մարքեթինգի ուղղություններով դասերը սկսվում են սեպտեմբերի 15-ից, ժամը 18:30:
11. Առցանց դասախոսություններին մասնակցելու համար բոլոր ուսանողների համար կբացվեն օգտահաշիվներ:
12. Առկա բակալավրիատի և առկա մագիստրատուրայի բոլոր կուրսերի դասախոսությունների ընթացքում ապահովվում է նաև առցանց հեռարձակում՝ (google meet, zoom, google classroom հարթակներով):
13. Առցանց դասախոսություններին ուսանողները պարտավոր են ամբողջ ընթացքում միացրած վիճակում թողնել տեսակապը:
14. Ինստիտուտ մուտք գործելիս և դասերի ընթացքում անհրաժեշտ է խստագույնս պահպանել պարետատան ցուցումները:
15. ինստիտուտ մուտք գործելիս կատարվում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի անհատական ջերմաչափում: Ինստիտուտում վարվում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ջերմաչափման մատյան: Մատյանում գրանցվում են միայն 37 և ավելի ջերմաստիճան ունեցող ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի տվյալները, որոնց մուտքը բուհ կարգելվի:
16. Պարտադիր է շնչադիմակ կրել Ինստիտուտում գտնվելու ողջ ժամանակահատվածում:
17. Լսարաններում ուսանողների առավելագույն թիվը 30-ը: Լսարաններում պահպանվում է սոցիալական հեռավորությունը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆ

2020թ. օգոստոսի «31»

Երևան